

**ՀՈՍԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ
ՀԱՍԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ-ԴԱՐՉՎԱԾԶԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ**

Լեզվի դարձվածային կազմում առանձնահատուկ տեղ ունեն համեմատություն – կայուն կապակցությունները, որոնք լեզվաբանական գրականության մեջ կոչվում են մահ համեմատական դարձվածային միավորներ (ՀԴՄ) կամ համեմատություն – դարձվածային արտահայտություններ:¹ ՀԴՄ-ների հիմքում ընկած է պատկերավոր համեմատությունը, որն արտահայտում է մի առարկայի ու մյուս հատկամիջի կամ գործողության ու մյուս հատկամիջի հարաբերությունը մեկ ուրիշ առարկայի հատկամիջի, գործողության հիմնական կամ ընդհանուր հատկամիջիների հետ:

ՀԴՄ-ների կազմության համար անհրաժեշտ են երեք անդամներ. համեմատության առարկան կամ սուբյեկտը, համեմատության հեմակետը, որը պատկերավորության կրողն է և այն ընդհանուրը, որը հատուկ է թե՛ սուբյեկտին, թե՛ համեմատության հեմակետին:² Հմտ. Երեխան (1) ձկան պես (2) լուռ է (3)// Երեխան (1) լուռ է (3) ինչպես ձուկը (2): Աղջիկը (1) մտնի պես (2) հալվում է (3)// Աղջիկը (1) հալվում է (3) ինչպես մտը (2): ՀԴՄ-ների կազմում մշտական անդամներ համարվում են վերջին երկուսը:

Արդի հայերենի ՀԴՄ-ները կազմվում են *պես* և *մման* կապերով, այլև՝ *չափ*, *ինչպես* (*որպես*), *իբրև*, *ասես*, *կարծես*, *ոնց որ* համեմատական բառերով: Հմտ. քարի մման լուռ, թռչունի պես ազատ, տաշեղի մման թեթև, գրամիսի պես ամուր, մի բաժակ ջուր խմելու չափ հեշտ, թափվել ինչպես առատության տղջուրից, իբրև մորից մոր ծնված, ասես որոտ պարզ երկնքից, կարծես ասեղների վրա մտած լինել:

ՀԴՄ-ների առանձնահատկություններից մեկն էլ հոմանշային հարաբերությունների մեջ մտնելու կարողությունն է: Նրանցում քիչ են այն դարձվածքները, որոնք չունեն դարձվածային հոմանիշներ: Ընդհանրապես մասնագիտական գրականության մեջ հոմանիշներ են համարվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք տարբեր են ձևական կողմով, իսկ իմաստային կողմով կա՛ն մույնական են, կա՛ն ունեն մրցեբանագային, հոգաբարտահայտչական կամ ոճական և գործառական տարբերություններ:³

Դարձվածաբանական գրականության մեջ գոյություն ունեն դարձվածային հոմանշության տարբեր, այլև միմյանց լրացնող սահմանումներ:⁴ Առավել հիմնավորը և ամբողջականը մեր կարծիքով հետևյալ սահմանումն է. «Դարձվածային հոմանիշներ են այն տաքսկազմ և մույնական դարձվածային միավորները, որոնք ունեն միևնույն նշանակությունը՝ միավորների ձևային պատճառաբանվածության անհամապատասխանությամբ և իմաստային նրբերանգների, ոճական-գործառական պատկանելության ու կապակցելիության հնարավոր տարբերություններով հանդերձ»:⁵

Այսպիսով, ինչպես բառային, այնպես էլ դարձվածային հոմանիշներին հատուկ են՝ ա) տարբեր ձև, ընդհանուր նշանակություն ունենալը, բ) իմաստային ու ոճական տարբեր նրանգներ արտահայտելը:

¹ Л. И г н а т ь о в а, Структурные и семантические свойства фразеологических единиц с фразеобразующим компонентом «как» в современном русском языке (АКП), Л., 1976, стр. 3-4; Հմտ. Խ. Բաղդելյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 126, 261, 263, 271: Պ. Բեղիկյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն քառականացությունները, Եր., 1990, էջ 50 – 51:

² А. Н а з а р я н, Фразеология современного французского языка, М., 1987, стр. 112.

³ Վ. Ա յ ա ղ ե լ յ ա ն, Ա. Խ ա չ ա տ ր յ ա ն, Ս. Է լ յ ա ն, Ժամանակակից հայոց լեզու, Կ. 1, Եր., 1979, էջ 201:

⁴ Հմտ. Ս. Արրահանյան, Հայոց լեզու, Բառ և խոսք, Եր., 1978, էջ 158: Ս. Սուրիանյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1971, էջ 270: А. Мокошков, Основы фразеологии русского языка, Л., 1977, стр. 163; А. Назарян, Образные сравнения французского языка, М., 1965, стр. 8.

⁵ И. Ч е р н ы ш е в а, Фразеология современного немецкого языка, М., 1970, стр. 81:

Ա. Համանիշ ՀԴՄ-ների դասակարգումը՝ ըստ իմաստասիրի և ոճական - գործառական հատկանիշների: Դարձվածաբանական գրականության մեջ այս առումով առանձնացվում են հոմանիշների երեք տիպեր:

1. Տարբեր կառուցվածքով, բայց մեկ ընդհանուր ամրամուկ համանիշ դարձվածքներ կամ հոմանշային տարբերակներ:
2. Տարբեր բառային կազմով հոմանիշ դարձվածքներ կամ բուն համանիշներ:⁶
3. Ոճական հոմանիշներ:⁷

Հոմանշային տարբերակները հաճախ միևնույն իմաստն են արտահայտում՝ համդես գալով որպես դարձվածային նույնանիշներ: Հմտ. աղբյուրի պես հոսել // հոր-դել// խփել // ետալ // բխել (առատորեն և անվերջ գալ), դաճակի // դաշույնի պես սփռել խրվել (լսար խոցվել), խելագարի // խենթի պես սփռել (չափազանց շատ, ինքնամոռաց սիրել): Հմտ. Նա խենթի պես սիրում էր մանավանդ Ասլամի քարձր պարիսպներով շրջապատված այգին....(ՄԽՀ, 501): Բմացի՛ր, Աբևիկը խելագարի պես սիրում է Քա-ջանց Գարեգինին (մ.տ., 584):

Բուն դարձվածային համանիշները, որոնք կազմվում են տառերի քառային միջոցներով, ունենում են իմաստային և հուզարտահայտչական տարբերություններ: Հմտ. Ասես գետնի տակն անցավ, ասես ջրի տակը սուզվեց, ասես քամին տարավ, ասես երկինք համարաքմվեց, ոմց որ դամակով կտրես (ամենտամալ, չքամալ, չքվե): Տերևի մմամ փոխտալ, ուտու պես դողալ, շամ պես վախենալ (աաստիկ վախենալ): Զամ մմամ թռչել, կալծակի մմամ պամալ, հողմի պես սուրալ (շատ արագ թռչել, պամալ):

Դամակի/դաշույնի պես սիրտը խրվել, մետի մման ցցվել սրտում, սուր պաշ-
մերի պես թափանցել միմչև սրտի խորքը, ծանր մտորնի պես հարվածել գլխիմ, օձի պես
խայթել, կայծակի պես շամթել, գամգի մեջ ասես ասեղմեր տնկվել («խոր խոցվել»
ընդհանուր իմաստով): Հմմտ. Ամեն մի քառո մի դաշույնի պես ակամջս է խրվում (ՄՄ,
327): Վերջին խոսքը այնպիսի մաղձուտ ձայնով արտասանեց փոքրիկ երիտասարդը,
որ մետի մման ցցվեցավ մեծափառ Պարթևի սրտում (Բ,83): Նրա ակամջմերի մեջ դեռ
զարկում էին սուր կծու խոսքերը և սուր սլաքների մման թափանցում էին միմչև սրտի
խորքը (Ս.ա., 360): Ծանր մտորնի պես հարվածեց այդ ամենը նրա գլխիմ (Դ-Դ,168): Այս
եր արտահայտում նրա դիվային ժպիտը, որ օձի պես խայթեց Միքայելին (ԱԸ,4,343):
Վերջին խոսքերը կայծակի պես շամթեցին Մորմոմանի քարացած սրտին (Բ,535):
Միսթարի գամգի մեջ ասես ասեղմեր ցցվեցին (ԱԽՄ, 548):

Ինչպես տեսնում ենք, այստեղ առկա են «շատ խոր խոցեր» ըմդիամուր իմաստով հոմանիշ ՀՂԴ-ներ, որոնց միջև առկա է իմաստային սաստիկության աստիճանականություն (գրադացիա): Իսկ, ասենք *ռաբու պես դողալ, շամ պես վախենալ* հոմանշային գույգը դրսևորում է հուզարտահայտյալան տարբերություններ:

Դարձվածային ռեակամ իմանիշներն ստանձնանում են լեզվի գործառական տարրեր ռեներում ռմեցած կիրառությանը:

Հմտ. Գիտափոր աստղի պես փառել (գրք.), պոչով աստղի պես երևալ (խսկց.) - ուշ-ուշ երևալ: Ջրի մման տռռացմել (խսկց.), ջաղացի պես տորոտ տալով անցմել (քրք.) - արագ-արագ կարոյալ: Ապուշի պես (արհմրհ.), իշացածի պես, տավարի պես (գռիկ.) - հիմարարար: Աղբյուրի պես գալ (համագործած.), վարար գետի մման հոսել (գր.), թափվել իմչպես առատության եղջյուրից (գրք.), սելավի պես թափվել (քրք.)-ուծել հորդել:

Հմտ. Գալիս է մավթը, գալիս աղբյուրի պես (ԱԵ,7,75): Մեր կյանքում ռազմական փողի մեծան թնդում էին Գամառ – Քաթիսյայի ազատ երգերը, վարքի գեղի մեծան հոսում էին Բաֆթու վեպերը՝ անընդհատ խորհրդավոր (ՀԹ,476): - Մեղավի պես կաթ է տալիս (ՆՁ,427):

⁶ *U. P r r h h w d j w d, d2q. w2ju, t9 158: A. Haxaryan, d2q. w2ju, t9 9: H. Chernysheva, d2q. w2ju, t9 144:*

О. Неведомская, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими (АКД), Л., 1973, стр. 7; М. Фомина, Русская лексика и фразеология, ч. 1, М., 1965, стр. 25–27; И. Чернышева, *Иш. ш/ш*, т. 91:

Բ. ՀՂՄ-ների համանշալին շարքը: Ինչպես բառային, այնպես էլ դարձվածային հոմանիշների շարքը համաժամանակյա (սինխրոնիկ) լեզվական կարգ է: Դարձվածային հոմանիշների շարքը երկու կամ ավելի դարձվածքների փոխմը է: Թե՛ բառային, թե՛ դարձվածային հոմանիշների համար «հոմանշալին շարք» տերմինից բացի կիրառվում են նաև «հոմանիշների փոխը» կամ «հոմանիշների բույն» տերմինները:⁸

ՀՂՄ-ների դեպքում դարձվածային հոմանիշների շարքերը քանակական ընդգրկումներով կարող են տարբեր լինել՝ ներառելով երկուսից մինչև տասնեինգ, երբեմն ավելի ՀՂՄ-ներ: Քննվող դարձվածքների հոմանշալին շարքերի մեջ մեծամասնություն են կազմում երկու, երեք և չորս դարձվածքներ ընդգրկողները: Մեր տվյալներով առավել շատ հոմանիշ ՀՂՄ-ներ ունեցող շարքերից է «պնդակազմ» ընդհանուր իմաստով միազագաթ հոմանիշ դարձվածքների հետևյալ շարքը.⁹

Երկաթի պես, պողպատի պես, գրանիտի մեմ, պատի պես, պարսպի մեմ, կոճղի մեմ, կաղնու պես, ծառի պես, ցուլի պես, առյուծի պես, փղի մեմ, ծառի պես, սարի պես, լեռան մեմ, Գարոսայի մեմ (15 դարձվածք):

Իր ընդգրկումությամբ այդի ընկնող հոմանիշ ՀՂՄ-ների շարքերից է նաև որպես նվազատույք հանդես եկող «չափազանց փոքր» ընդհանուր իմաստով ՀՂՄ-ների հետևյալ փոխմը. Աստի ծայրի չափ, քորոցի գլխի չափ, եղունգի չափ, թռչունի կտուցի չափ, ծտի աչքի չափ, կորեկի չափ, մասուրի չափ, բալի մեմ /չափ, լուցկու տուփի չափ, մագի չափ (10 դարձվածք):

«Ամնաբար, մղեցնած» ընդհանուր իմաստով հետևյալ հոմանշալին շարքը ներառում է ինը հոմանիշ ՀՂՄ-ներ. Գծի պես, ցնդվածի պես, խենթի պես, խելագարի պես, կրակից փախչողի պես, խայթվածի պես, կայծակնահարի պես, շանթահարի պես, սպանվածի պես (վազել, փախչել, դուրս գալ, ցատկել տեղից, վեր թռչել և այլն):

Գ. Հոմանշություն և բազմիմաստություն: Լեզվական այս երկու երևույթներն ականառու ընդհանրություններ ունեն: Դարձվածքների՝ հոմանշալին կապերի մեջ մտնելու հնարավորությունը զգալիորեն առնչվում է նրանց բազմիմաստության հետ: Բազմիմաստ դարձվածքի իմաստային տարբերակները գործածվում են ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր հոմանշալին շարքերում:

Դարձվածային հոմանշալին շարքի անդամները նրբիմաստային և հուզարտահայտչական տարբերություններով հանդերձ՝ միավորվում են ըստ ընդհանուր իմաստի: Այդ իմաստի ծավալային ընդգրկումը կարող է համագեցնել նրան, որ հոմանշալին նույն շարքի ներսում կազմվեն իմաստով իրար ավելի մոտ խմբեր: Հմնտ. Գրանիտի պես, երկաթի պես, պողպատի մեմ, պատի պես, պարսպի մեմ, կոճղի մեմ, ծառի պես, կաղնու պես, ծառի մեմ, սարի պես:

Քննվող ՀՂՄ-ների հոմանշալին շարքի ներսում գրանիտի պես, երկաթի պես, պողպատի պես, պատի պես, պարսպի մեմ դարձվածքները կազմում են հոմանշալին մի խումբ՝ «ամուր, դիմացկուն» իմաստով, իսկ կոճղի մեմ, ծառի պես, կաղնու պես, ծառի մեմ, սարի պես ՀՂՄ-ները՝ մի այլ խումբ՝ «մնայուն, հաստատուն» նրբիմաստով: Հմնտ. 1. Միդոյի՝ գրանիտի պես ամուր այդ մարդու պատմությունը 1915-1920 թվականների արևմտահայության ճակատագրի կարդիոգրամն է (ՎՊ,458): -Մկանուններս այժմ, տես, երկաթի պես են (ԱԸ,2,148): Բայց ես ամուր էի՝ պողպատի մեմ (ՎԱ,367): Պատի պես ամուր շարվեցե՛ք կանգուն (ԱԻ,275): Ողջ գյուղը կանգնեց՝ պարսպի մեմ (ՀԹ,178): 2. Նրանցից առաջ եկավ մի գորական, կարճահասակ, կոճղի մեմ հաստատուն (ԳԴ,398): Գոր ծառի պես ես եմ կեցել, ընկերներս հող են դառել (ԱԻ,122): Հարյուր տարի էն ծովի կաղնու պես կանգնած էի (ՎԱ,195): Այս կրծքով ծառի պես կանգնեմ Մոլեզմած հեղեղի ճամփին (ՀՄ,283): -Երա տղեղ լուեղ սարի պես կանգնած, ամխոս թռչունքին ես ասու՜մ, - կանչեց նա զայրագին (ՆԴ,83):

Հոմանշալին հարաբերությունների մեջ մտնում են ինչպես մեմիմաստ, այնպես էլ բազմիմաստ ՀՂՄ-ները: Ինչքան իմաստներ ունի տվյալ բազմիմաստ ՀՂՄ-ն, այնքան հոմանշալին շարքեր կարող է կազմել: Հմնտ. «Ջրի պես» դարձվածքը

⁸Ա. Մուքիսյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1971, էջ 135:

⁹Միազագաթ ՀՂՄ-ների մասին տես Խ. Բաղիկյան, ՈՂՎ. աշխ., էջ 139, 259-261: Ա. Հեռարտ, ՈՂՎ. աշխ., էջ 115:

քաղվածատու է, ումի՝ 1. շատ վարժ, ամզիք (իմանալ), 2. ամխմա, շտալտրեն (փռո ծախսել), 3. առատորեն (հոսել) իմաստները:

Իր առաջին իմաստով այն մտնում է հետևյալ հոմանշային շարքի մեջ. Ջրի պես, հիմզ մատի պես, փրփուրի պես, Հայր մերի պես, Ավետարանի պես (գիտեմալ, իմանալ, ճանաչել):

Իր երկրորդ իմաստով այն հոմանիշ է թաժա հացի պես (գմալ, փռո ծախսել) դարձվածքին, իսկ երկրորդ իմաստով՝ աղբյուրի պես, գետի պես, հեղեղի պես (հոսել, բխել, հորդել) դարձվածքներին:

«Լույսի պես» ՀՂՄ-ն ումի՝ 1. շատ գեղեցիկ, 2. մարմնով սպիտակ, 3. շատ պարզ, ակնհայտ իմաստները և համապատասխանաբար համոզես է գալիս երեք տարբեր հոմանշային շարքերում: Հմտ. 1. լույսի պես, երեշտակի պես, ինչպես մի պատկեր, ինչպես մախշ ու մկար: 2. Լույսի պես, կաթի պես, քամքակի մմամ, ձյունի պես (սպիտակ), փրփուրի պես (ճերմակ): 3. Լույսի պես, օրվա պես, արևի պես, երկու անգամ երկու՝ չորսի պես (պարզ):

«Կրակի մմամ» ՀՂՄ-ն ումի՝ 1. շատ ճարպիկ, աշխույժ, 2. չափազանց արագ իմաստները, որոնցով էլ առանձին - առանձին հոմանշային շարքեր է կազմում: Հմտ. 1. Կրակի մմամ, կատվի մմամ (ճարպիկ): 2. Կրակի մմամ, ծտի պես, քամու մմամ, կայծակի մմամ, հողմի պես (շատ արագ սլանալ, թռչել):

«Ծտի պես» դարձվածքը քացի «շատ արագ» իմաստը, ումի մակ «շատ թեթև» մշանակությամբ, որով էլ այն համանիշ է տաշեղի մմամ, հովի պես, փետուրի պես (թեթև) ՀՂՄ-ներին և այլն:

Դ. Հոմանիշ ՀՂՄ-ների դասակարգումն ըստ ձևարանական արժեքի: Դարձվածային հոմանիշների մեջ առանձին խումբ են կազմում տրամաբանորեն հասկացություն արտահայտող դարձվածային միավորները: Դարձվածքի ձևարանական արժեքը ասելիս մկատի է առնվում մրանով արտահայտված հասկացությունը, խոսքիմասային պատկանելությունը. դարձվածքն այս կամ այն խոսքի մասին համարժեք է առաջին հերթին իր արտահայտած իմաստով:

Ըստ ձևարանական արժեքի՝ հայերենում հանդիպում են մեծ մասամբ ածականական, քայական և մակքայական հոմանիշ ՀՂՄ-ներ:¹⁰

1. Ածականի արժեք ունեցող հոմանիշ ՀՂՄ-ներ: Այդպիսիք հանդես են գալիս կապական կառույց + ածական կամ ածական + կապային կառույց տարբերակներով: Հմտ. 1. Կոճղի պես, քարի պես, գերեզմանի պես, ձկան պես (լուռ, սառն, համր): 2. Կարմիր ինչպես վարդը, կարմիր ինչպես հուրը, բոսոր ինչպես արյունը: 3. Հին ինչպես աշխարհը, երկրագնդի պես հին, Ադամի չափ ծիր:

Ինչպես տեսնում ենք, ածականի արժեքով հոմանիշ ՀՂՄ-ների կառուցվածքային տարբերակները հանդիպում են մակ միևնույն հոմանշային շարքում: Ածականական հոմանիշ ՀՂՄ-ներն արտահայտում են մարդկանց և իրերը՝ քննադատող հասկացություններ: Հմտ. 1. Ինչպես ջրի երկու կաթիլ, ինչպես մի խնձոր՝ երկու կես արած, ինչպես մի սաջի հաց, ինչպես մի ծառի պտուղ (իրար շատ մմամ՝ ներքինով, արտաքինով): 2. Ածուխի պես սև, կուպրի մմամ սև, մրի պես սև, սաթի պես սև, սարյակի թևի մմամ սև, խեժի պես սև (գերազանցապես ասվում է դեմքի, ձեռքերի, հագուստի չափազանց սև լինելու դեպքում):

Հոմանիշ ՀՂՄ-ների այս փնջում առկա են «սև» գունանիշ ածականով դարձվածքներ: Ածականական ՀՂՄ-ների շատ հոմանշային շարքեր կազմվում են հենց գունանուն քաղաղդիչով դարձվածքներով:¹¹

2. Մակքայի արժեք ունեցող հոմանիշ ՀՂՄ-ներ: Մակքայական ՀՂՄ-ները ևս դասվում են ոչ հաղորդակցական դարձվածքների թվին: Մակքայի արժեքով ՀՂՄ-նե-

¹⁰ Հազվադեպ հանդիպում են եղանակավորող հոմանիշ ՀՂՄ-ներ: Դրանք խոսքը երանգավորող համեմատություն-դարձվածքներ են: Հանդիպում են կապ+կապ խնդիր կառուցվածքով: Հմտ. Հակառակի պես, քարսի պես, սատամայի պես: Ախպար պես, եղոր մմամ և այլն:

¹¹ Գունանունների դարձվածակազմիչ դերի մասին անհ Լ. Խաչատրյան, Խոսքիմասային տարբարժեքությունն արդի հայերենի կայում կապակցություններում, Եր., 1996, էջ 94-106, Գունանունով ՀՂՄ-ների քննությունը տես Լ. Խաչատրյան, Գունանուն քաղաղդիչով համեմատություն-դարձվածային միավորներն արդի հայերենում («Համեր ԵՊՀ-ի», Եր., 1999):

քում մակերային ստեղծությունը պարտադիր չէ: Ավելացնենք, որ բուն մակերայնեցում ՀՂՄ-ները հայերենում գրեթե չկան, սակայն նրանցում կարող են լինել այնպիսիք, որոնք խոսքային միջավայրում, նայած լրացյալին, դիտվեն կա՛ն իբրև ածականներ, կա՛ն իբրև մակերայնք: Հմմտ. Ու բիրտ, վայրենի, կամգնեց, ինչպես սար (մակերայ/ձևի պարագա), (ՀԹ, 151): Մի քանի սև փողերի համար սարի պես տղամարդը շուտ անցավ (ածական/դրոշիչ), (ՊՂ, 51):

Ավածը կարելի է դիտել մահ ՀՂՄ-ների միևնույն հոմանշային շարքում:

Հմմտ. Բացարձակ անհեթեթ ուսմունքներ հավանաբար չկան, յուրաքանչյուրը քեկուզ քորոցի գլխի չափ ճշմարտություն պետք է ունենա իր հիմքում, որ հենվի նրան (ածական/դրոշիչ), (ԱՄ, 302): Գեղեցիկ էին նրա պացիկ իրանը, բալի մնամ փոքրիկ բերանը, բարեկազմ մեղե ոտքերը (ածական/դրոշիչ), (ՄԽ, 4, 13): Ո՛ւմ բախտից էր, Բեկի դատե՛ր, քե՛ն՝ բախտից էր պատամու, Որ սև դամեն կողմ էր խրվել կտուցի չափ աղավնու (մակերայ/չափ ու քանակի պ.), (ՀԸ, 57): Բայց ոչինչ... չպիտի մագու չափ հուսահատվել (մակերայ/չափ ու քանակի պ.), (ԱԸ, 2, 233):

Հայերենում մեծ մասամբ առկա են մեկ լիմաստ և մեկ թերիմաստ քառից՝ կապից կամ կապակիան քառից կազմված հոմանիշ մակերայական ՀՂՄ-ներ, այլ կերպ ասած՝ միագազաթ (адавертенимые КФЕ) ՀՂՄ-ներ: Կարող են պատահել այս կառույցի ծավալումներով մակերայական հոմանիշ ՀՂՄ-ներ: Հմմտ. աշխարհի չափ, ծովի պես, բայց՝ մազերի համբանքի չափ, երկնքի աստղերի չափ, ծովի ավազի չափ (անչափ, անքանակ):

Միագազաթ ՀՂՄ-ներում ևս կարող են լինել փոխանունություններ: Հմմտ. մոլորվածի մնամ, մի բան կորցրածի պես, տպանվածի պես (վշտաբեկ, ընկճված): Հոմանիշ մակերայական ՀՂՄ-ները առավել արտահայտիչ են դարձնում գործողությունների հատկանիշները՝ պատկերավորություն տալով խոսքին:

3. Բայական հոմանիշ ՀՂՄ-ներ: Բայական ՀՂՄ-ների գերադաս քաղաղրիչը պարտադիր բայ է: Դրանք հանդես են գալիս բայ + գոյական + կապ կառույցով, ինչպես մահ ստորադասական մախադասության ձևավորումով: Հմմտ. Սպումգի պես ծծել, խաղովակի պես ընդունել, ծծանի պես կլանել (արագ, անմիջապես յուրացնել): Միսի պես անցնել, երազի մնամ անէանալ, միքածի պես չքանալ (անմկատելի և արագ անցնել, անէանալ): Կարծես այս աշխարհում չլինել, ասես մորից մոր ծնվել (ցնծության մեջ լինել): Կարծես երկնքից է, կարծես լուսնից է իջել, կարծես այս աշխարհից չէ (արտահայտում է զարմանք կամ գայտույթ նրա նկատմամբ, ով չգիտի որևէ համբախալու բան): Փոխվել ինչպես երագում, շուտ գալ ինչպես հեքիաթում (արագ և հիմնովին փոխվել): Տարբերվել ինչպես սևը սպիտակից, հեռու լինել ինչպես երկինքը երկրից (չափազանց տարբեր լինել):

Բայական ՀՂՄ-ները, ինչպես առեստարակ բայական կապակցությունները, ծավալման ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան մյուս ՀՂՄ-ները: Բայական ՀՂՄ-ների հոմանշային շարքերում հանդիպում են ինչպես երկանդամ, այնպես էլ բազմանդամ ՀՂՄ-ներ: Հմմտ. Հոյի պես պատվել, որսկանի բարակի պես վազել, սատանի չարխի պես դառնալ (անընդհատ շարժման մեջ լինել):

Ասես երկինք համարձակեց, ասես գետնի տակն անցավ, կարծես քամին տաքավ, ասես ջրի տակը տուզվեց, ոմց որ դանակով կտրես (անհետանալու, չքանալու մասին): Կտրած գդալի պես մեջ ընկնել, քանի ճանճի մնամ մեջտեղ ընկնել (խառնվել իրեն չվերաբերող գործերին): Իբեմ զգալ ինչպես մոր փորում, ապրել ինչպես Աբրահամի գոգում (լիության մեջ ապրել):

Բայական հոմանիշ ՀՂՄ-ներում ևս կարող են լինել փոխանունություններ: Հմմտ. Մեմի մնամ ասեն կողմ շուտ տալ, բայց՝ ուզածի պես խաղացնել (մեկին ստիպել իր ուզածի պես վարվել):

Այսպիսով՝

1. ՀՂՄ-ները երկանդամ, կայուն, վերափոխատվողված քառակապակցություններ են, որոնց հիմքում ընկած է պատկերավոր համեմատությունը:

2. ՀՂՄ-ներին քննորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ կարող է ունենալ հոմանշային գոյգեր կամ շարքեր:

3. Հոմանիշ ՀԴՄ-ներում առանձնանում են հոմանշային տարբերակները, որոնք մեծ մասամբ համընկնում են մույնամիջների հետ, թեև դրսևորում են նրբիմաստային ու հուզարտահայտչական տարբերություններ, և միմյանց նկատմամբ ռճական - գործառական տարբերություններ դրսևորող ռճական հոմանիշները:

4. Դարձվածային հոմանիշների շարքը համաժամանակյա (սիմյուրնիկ) իրողություն է: ՀԴՄ-ների հոմանշային փոմջը կազմվում է երկու և ավելի (մինչև տասնվեց) դարձվածքներից:

5. Դարձվածային հոմանիշները պատկանում են միևնույն քերականական կարգին: Արդի հայերենում ավելի շատ հանդիպում են ածականական, բայական և մակրայական հոմանիշ ՀԴՄ-ներ:

ՀԱՍԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԻ - Ալ. Իսահակյան, Երկեր, հ. 1, Եր., 1958:

ԱԸ - Ալ. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, 4, 7, Եր., 1950 - 51:

ԱՍ - Ա. Սահիմյան, Կեանքներ, Եր., 1976:

ԴԴ - Դ. Դմիտրյան, Վարդամանք, Եր., 1987:

ՀԹ - Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, Եր., 1978, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1991, հ. 4:

ՀԸ - Հովհ. Շիրազ, Միամանքս և հոջեզարե, Եր., 1970:

ՀՍ - Հ. Սահյան, Բանաստեղծություններ, հ. 1, Եր., 1967:

ՆԴ - Նար - Դառ, Պատմվածքներ և վիպակներ, Եր., 1978:

ՆԶ - Ն. Ջաղյան, Հացալիան, Եր., 1960:

ՊՊ - Պ. Պետրյան, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1963:

ՍԽՀ - Ս. Խանգաղյան, Հողը, Եր., 1957:

ՍԽՄ - Ս. Խանգաղյան, Միսքար Սպարապետ, Եր., 1963:

ՍՍ - Ս. Սեֆերյան, Իմաստախոս Շերապիրը, Եր., 1986:

ՎԱ - Վ. Անանյան, Լեռներ Հայրենի, Եր., 1963:

ՎՊ - Վ. Պետրոսյան, Հավասարում բազմաթիվ անհայտներով, Եր., 1977:

Բ - Բաֆֆ, Սամվել, Եր., 1967:

СИНОНИМИЯ КОМПАРАТИВНЫХ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

____ Резюме ____

____ Л. Автисян ____

Компаративные фразеологизмы (КФ) активно синонимизируются. В семантическом и функционально-стилистическом аспектах у КФ-синонимов различаются равноценные, неравноценные и стилистические синонимы. КФ-синонимы выступают в функции одной и той же части речи. В современном армянском языке встречаются глагольные, адъективные, наречные КФ-синонимы.